

Գիտության ոլորտի հասարակական կազմակերպություններ

1. [Տեղեկատվության պահոցների ավտոմատացման եւ հետազոտման խումբ](#)
Գիտական եւ տեխնիկական մտքի կենտրոնացումն է նպաստելու տեղեկատվության պահոցների ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներով զինելուն, այնտեղ օգտագործվող գործընթացները մշտապես կատարելագործելուն: Նպաստել քաղաքացիական կրթության տարածմանը հանրապետության ազգաբնակչության շրջանում:
2. [«Նոր հորիզոններ» գիտական ՀԿ](#)
Նպաստել համակարգչային եւ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը: Աջակցել համակարգչային եւ տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվողների եւ այդ ծառայություններից օգտվողների շահերի պաշտպանությանը:
3. ["Բիոէկոմեդ" հասարակական կազմակերպություն](#)
Խթանել գիտնականների ստեղծագործական նախաձեռնությունները, պաշտպանել նրանց մասնագիտական իրավունքները, նպաստել նրանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Իրականացնել համապատասխան գործողություններ՝ կանխելու կին եւ երիտասարդ գիտնականների հանդեպ մասնագիտական խտրականության դրսեւորման դեպքերը: Քաջալերել տարբեր խմբերի կողմից բուսաբանության, բնապահպանության եւ բժշկության ոլորտներում առկա մեծ ուսումնասիրությունների եւ տեխնոլոգիական հիմնախնդիրների լուծման նախաձեռնությունները: Նպաստել միջազգային համագործակցության մեջ ՀՀ գիտնականների ներգրավմանը:
4. ["Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ" հետազոտական ՀԿ](#)
Ժանամակակից սոցիալական տեխնոլոգիաների կիրառմամբ նպաստել Հայաստանի սոցիալական զարգացմանը:
5. ["Խավերուտ" Իսրայելի մշակութային, տնտեսական եւ քաղաքական կենտրոն ՀԿ](#)
Արեւելագիտական, հատկապես Իսրայելի մշակութային, տնտեսական եւ քաղաքական հիմնախնդիրների լուսաբանում եւ հետազոտություն:
6. [«Սպեկտր» ռազմավարական վերլուծության կենտրոն](#)
Հետազոտել եւ վերլուծել Հայաստանում եւ Հարավային Կովկասում քաղաքական եւ սոցիալ-տնտեսական զարգացումները: Առաջարկություններ մշակել տարածաշրջանում զարգացումները խոչընդոտող հանգամանքների կանխարգելման վերաբերյալ:
7. [«Ճարտարագիտական կենտրոն» հասարակական կազմակերպություն](#)
Նպաստել եւ զարգացնել Հայաստանում ինժեներական ծրագրերի եւ տեխնոլոգիաների կիրառմանն ու զարգացմանը, համախմբել ինժեներների ջանքերը: Բարձրացնել ինժեներների տեխնիկական եւ կրթական մակարդակը:
8. [«Հոգեբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն](#)
Նպաստել հոգեբանության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, զարգացմանը եւ առաջավոր փորձի տարածմանը: Մշակել մարդկային հոգեբանական մտածողության համակարգը՝ նպաստելով Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացմանը: Կազմակերպել հոգեբանական աշխատանքներ հասարակության եւ ընտանիքի պահպանման եւ զարգացման նպատակով:

9. «Անձավագիտական կենտրոն» ՀԿ

Բնական եւ արհեստական քարանձավների փնտրում, հայտաբերում եւ դասակարգում: Էկո միջավայրի պահպանում: Բնապահպանական ծրագրերի իրականացում: Ինտեգրում համաշխարհային գիտական հանրությանը: Դասախոսությունների, սեմինարների, գիտաժողովների կազմակերպում:

10. «Ինֆորմացիոն և կոմունիկացիոն տեխնոլոգիաների կենտրոն» ՀԿ

Իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը նպաստող ծրագրեր: Նպաստել ինտերնետի տարածմանը, հայկական ինտերնետային կայքերի եւ տվյալների շտեմարանների ստեղծմանը: Տրամադրել խորհրդատվություն տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ: Նպաստել փոքր եւ միջին գործարարության զարգացմանը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Համագործակցել նմանատիպ

11. «Վայքի ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման կենտրոն»

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում: Առողջապահական եւ մշակութային միջոցառումների կազմակերպում: Տեղեկատվության փոխանակում: Շրջական միջավայրի պահպանում: Զբոսաշրջության զարգացում եւ ընդլայնում: Մարդու իրավունքների պաշտպանություն: Աջակցություն ազատ մամուլին:

12. «Հասարակական ուսումնասիրությունների և կոնֆլիկտների վերլուծության երիտասարդական կենտրոն» ՀԿ

Հասարակության մեջ առկա տարբեր բնույթի կոնֆլիկտների համակողմանի ուսումնասիրություն եւ լուծման ուղիների նախանշում գիտական գործունեության հարթության վրա: Երիտասարդության ներգրավումը դեպի հասարակական գործունեություն:

13. Երկրատեղեկատվական կենտրոն ՀԿ

Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում, մասնագետների պատրաստում, խորհրդատվության տրամադրում: Տեղեկատվության հրատարակում եւ տարածում: Սեմինարների եւ ցուցահանդեսների կազմակերպում:

14. Էլեկտրոնային միկրոսկոպիայի հայկական ընկերություն

Գիտական գործունեության ծավալում, գիտության եւ տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում:

15. Անկախ փորձագետների ընկերակցություն

Տրամադրել գիտելիքներ եւ օգնություն: Իրականացնել տարաբնույթ վերլուծական ուսումնասիրություններ: Աջակցել ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը:

16. «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն

Որոշել ներկա սոցիալական եւ տնտեսական փոփոխությունների էթնիկական պատկանելիությունը: Հայաստանում զարգացնել մարդաբանություն գիտությունը: Կազմակերպել էթնիկական հետազոտություն:

17. Սյունիքի զարգացման ինստիտուտ

Նորագույն տեխնոլոգիաների, քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության եւ առողջապահության զարգացում: Մարդու իրավունքների պաշտպանություն:

18. Հայկական վիճակագրական կոմպյուտերային ընկերություն

Վիճակագրական, մաթեմատիկական համակարգչային ծրագրերի զարգացում, հասարակության տարբեր ոլորտներում դրանց կիրառում: Միավորել մասնագետների գործունեությունն ու ջանքերը, նպաստել կարծիքների փոխանակմանը:

19. **Գյումրու մտավորականների միություն**

Նպաստել Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական, գիտամշակութային հիմնահարցերի լուծմանը, մտավորականների սոցիալական շահերի պաշտպանությանը, հասարակության մեջ նրանց դերի եւ նշանակության բարձրացմանը: Սատարել երիտասարդ շնորհալի գիտնականներին, արվեստագետներին, ուսանողներին:

20. **«ԳԵՈՖՈՆ» գիտական բնապահպանական հասարակական կազմակերպություն**

Իրականացնել գիտական ուսումնասիրություններ, բնապահպանական եւ բնօգտագործման ոլորտներում: Կատարել սոցիալ-տնտեսական աշխարհագրության ոլորտի ուսումնասիրություններ: Կազմակերպել եւ իրականացնել կրթական ծրագրեր՝ բարձրացնելու համար բնակչության էկոդաստիարակչության մակարդակը:

21. **Հակաճգնաժամային վերլուծական կենտրոն ՀԿ**

ՀՀ-ում տնտեսական, սոցիալական, կրթական եւ այլ ոլորտներում ճգնաժամային երեւույթների հաղթահարման աջակցում: Ուսումնական, հետազոտական, հրատարակչական, կազմակերպչական աշխատանքների եւ ծրագրերի իրականացում այդ բնագավառներում:

22. **Համահայկական գիտական խորհուրդ**

Միավորել Հայաստանի Հանրապետության, Արցախի եւ Սփյուռքի գիտական ներուժը ի շահ ՀՀ եւ ԼՂՀ սոցիալ-տնտեսական, գիտական զարգացմանը:

23. **Հայկական աշխարհագրական միություն**

Մասնակցել հայ անկախ պետականության կայացմանը եւ միջազգային ինտեգրացմանը: Կազմակերպել գիտական համաժողովներ, սեմինարներ, տարբեր ոլորտներում կատարել փորձաքննություններ: Անցկացնել բնակչության աշխարհագրական եւ էկոլոգիական գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

24. **Շիրակի մարզի Ինտերնետ օգտագործողների քննակրթություն**

Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման եւ տեսեկատվական գործունեության կազմակերպում: Ինտերնետ ցանցի օգտագործման աշխատանքների համակարգում:

25. **«Ակունք» էթնոսոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն**

Նպաստել հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական ու մշակութային հիմնախնդիրների լուծմանը, օժանդակել չքավորության, գործազրկության, արտագաղթի նվազեցմանը, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը:

26. **«Պրոգրես» սոցիալական հետազոտությունների կենտրոն ՀԿ**

Աշխատանքի, զբաղվածության, սոց. Ապահովության եւ այլ բնագավառների օրենսդրության ուսումնասիրություն, կոնկրետ առաջարկների մշակում, սեմինարների, հանդիպումների կազմակերպում եւ անցկացում, գիտագործնական, ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակում: